

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղերձը Երեխաների պաշտպանության օրվա առթիվ

1.06.2014

Հարգելի հայրենակիցներ

Աշխարհը նորանում եւ մանկանում է միայն երեխաներով, ովքեր ոչ միայն մեր կյանքի իմաստն են ու նպատակը, այլ նաեւ մեր վաղվա օրը, մարդկային քաղաքակրթության պահպանման ու զարգացման կրողները եւ շարունակողները: Ուստի մեր ապրած ամեն մի ակնթարթը մենք պետք է ծառայեցնենք նրանց կարիքներին, բարեկեցիկ պայմանների ստեղծմանը, նրանց բարօր ու խաղաղ ապագայի կերտմանը:

Խաղաղ երկինք եւ մաղթում մեր երեխաներին, անհոգ, բայց միշտ կենսուրախ օրեր ու տարիներ, ծնողական անսպառ սեր ու գուրգուրանք:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ

Ռաֆիկ Գրիգորյան